ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/1>>

ք. Երևան <<10>> <<08>> 2016թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Պրոֆպրոեկտ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Կարապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված <<Ստեփանավանի ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ /իննսուն/ օրացուցային օրը ներառյալ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են սույն պայմանագրի N 5 Հավելվածում:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը:

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 /քսան/ օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքներն ընդունելիս կիրառվում են ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով նախատեսված պայմանները: Մինչև նշված կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 54149136 (հիսունչորս միլիոն հարյուր քառասունինը հազար հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, որից 9024856 (ինը միլիոն քսանչորս հազար ութ հարյուր հիսունվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների

փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.9 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Պրոֆպրոեկտ>> ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական տուն 2	Ք. Երևան, Գրիբոյեդովի 60
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	<<Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 900011005866	Հ/Հ 220553330774000
ՀՎՀՀ 02512868	ՀՎՀՀ 02244386
Նախարարության աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ն. Հարությունյան	_____ Ա. Կարապետյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
<<10>> <<08>> 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/1>> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
<<ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Անվանում	Չ/մ	Քանակը	Արժեքը, հազ.դրամ	
				միավորը	ընդամենը
1	2	3	4	5	6
	Քանդում				
1	Պատուհանների և վերնափեղկերի քանդում պատուհանագոգերի հետ 10 հատ	մ2	13,30	1,98	26,33
2	Ներքին դռների քանդում	մ2	50,4	1,16	58,38
3	Պատուհանների շեպերի /սվաղի/ քանդում	մ2	9,88	0,76	7,53
4	Հախճասալի քանդում	մ2	311,0	0,59	182,43
5	Միջնորմների քանդում	մ2	4,4	0,81	3,55
6	Խեցեսալի քանդում	մ2	229,00	0,42	96,90
7	Ասիական թասի բետոնի քանդում	մ3	3,95	15,46	61,08
8	Բետոնե հատակի քանդում	մ3	6,48	15,46	100,20
9	Դռան բացվածքի քանդում	մ3	1,5	15,46	23,19
10	Առաստաղի գաջե սվաղի քանդուն	մ2	120,4	1,00	120,06
11	Պատի գաջե սվաղի քանդուն	մ2	233,8	0,76	178,29
12	Տանիքի ցինկապատ թիթեղի ապամոնտաժում	մ2	2300	0,10	219,96
13	Տանիքի փայտյա էլեմենտների քանդում	մ3	9,54	24,11	230,00
	Տանիք				
14	Խարամի շերտի իրականացում	մ3	230	7,66	1762,26
15	Փայտե տախտակ	մ3	9,54	205,61	1961,49
16	Փայտյա կոնստրուկցիաների հակահրդեհային պաշտպանություն	մ3	9,54	11,61	110,79
17	Ցինկապատ 0,6մմ թիթեղից տանիքի ծածկույթի պատրաստում	մ2	200,00	4,12	823,10
18	Ցինկապատ 0,6մմ թիթեղից տանիքի ծածկույթի պատրաստում հին նյութի օգտագործումով	մ2	2100,00	1,37	2876,73
19	Տանիքի հորիզոնական ջրհորդանների կառուցում 0,5մմ ցինկապատ թիթեղից b=1,0մ հին նյութի օգտագործումով	մ	461,00	1,56	720,23
	ՀԱՄԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
20	Միջնորմների իրականացում պեմզաբլոկներով 10սմ հաստ,	մ2	8,4	2,80	23,16
21	Հատակների ց/ավազե հարթեցնող շերտի իրականացում 50մմ հաստ	մ2	120,4	2	241,3
22	Հատակի երեսպատում խեցեսալով	մ2	120,40	6,8	822,4
23	Պատերի սվաղում լավ որակի գաջե սվաղով	մ2	233,8	2	467,3
24	Շեպերի սվաղում բարելավված գաջե սվաղով	մ2	43,72	4,7	206,9
25	Առաստաղի սվաղ գաջով բարձր որակի 3սմ հաստ.	մ2	120,4	2,4	287,4
26	Առաստաղի ներկում լատեքսաներկով ծեփամածկումով 2 շերտ բարձր որակի	մ2	120,4	2	244,5
27	Պատերի ծեփամածկում	100մ2	2,338	57,54	134,52
28	Պատերի յուղաներկում և շեպի	100մ2	2,215	142,91	316,47
29	Զուգակցված շրջանակներով 2-շերտ ապակեպատմամբ մետաղապլաստե պրոֆիլից պատուհաններ չբացվող	մ2	13,30	22	292,6
30	Պատուհանագոգերի տեղադրում 30սմ լայն.	գծմ	8	3,08	24,63
31	Մետաղապլաստե դռան տեղադրում Դ-2	մ2	50,40	33,3	1678,32

32	Մետաղապլաստե դռան տեղադրում Դ-1 դուռ-13.52մ2, պլաստիկ մաս-3.52մ2, երկշերտ ապակեփաթեթով-7.3մ2	մ2	24,34	30	730,2
33	Մետաղապլաստե միջնորմների տեղադրում	մ2	15,50	27,53	426,76
34	Հախճասալերի տակ և մինչև առաստաղ ց/ավազե հարթեցնող շերտի իրականացում ցանցով	մ2	301,1	1,65	497,76
35	Պատերի երեսպատում հախճասալերով	մ2	301,1	6,8	2060
36	Շին աղբի հավաքում և հանում , բարձում ա/ինքնաթափերի վրա	տ	86	2,29	196,74
37	Տեղափոխում 12 կմ հեռ. վրա	տ	86	2,29	197,56
	Ջեռուցում				
38	Ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում	հատ	106,0	0,95	100,58
39	Եկկոնտուրանի կաթսայի տեղադրում 36 կՎտ	հատ	1	583,41	583,41
40	Եկկոնտուրանի կաթսայի տեղադրում 28 կՎտ	հատ	5	452,03	2260,14
41	Կաթսայի տեղադրում 36 կՎտ	հատ	5	529,58	2647,91
42	Պոմպ (պոմպը ընտրել պոմպի գրաֆիկից ու Q=3200կգ/ժամ, H=6մ)	հատ	1	154,88	154,88
43	Պոմպ (պոմպը ընտրել պոմպի գրաֆիկից ու Q=2600կգ/ժամ, H=6մ)	հատ	3	145,65	436,96
44	Ծխատար	հատ	1	12,78	12,78
45	Ծխատար 36 կՎտ	հատ	10	20,30	203,00
46	Ծխատարի երկարացում 1մ	հատ	1	16,45	16,45
47	Ծխատարի երկարացում 1.5մ	հատ	1	24,21	24,21
48	Ջրազազատար պողպատյա խողովակների մոնտաժում Φ20	զծ,մ	11	1,33	14,61
49	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում H=500մմ	էքմ	801,85	0,59	472,65
50	Ալյումինե մարտկոցների արժեքը	սեկց	2291,0	4,51	10340,96
51	Պոլիպրոպիլենային խողովակներ d=63 փորձարկումով	գմ	40,0	7,20	287,89
52	Պոլիպրոպիլենային խողովակներ d=50 փորձարկումով	գմ	96,0	5,28	507,31
53	Պոլիպրոպիլենային խողովակներ d=40 փորձարկումով	գմ	220,0	4,26	938,21
54	Պոլիպրոպիլենային խողովակներ d=32 փորձարկումով	գմ	556,0	2,64	1466,01
55	Պոլիպրոպիլենային խողովակներ d=25 փորձարկումով	գմ	504,0	2,53	1277,33
56	Նույնը, d=20	գմ	456,0	2,79	1271,42
57	Խողովակի ամրացում 63	հատ	57	0,29	16,60
58	Խողովակի ամրացում 50	հատ	137	0,25	34,56
59	Խողովակի ամրացում 40	հատ	220	0,14	29,77
60	Խողովակի ամրացում 32	հատ	1112	0,07	75,24
61	Խողովակի ամրացում 25	հատ	1008	0,05	49,39
62	Խողովակի ամրացում 20	հատ	912	0,05	44,69
63	Պտուտակ դյուպել N7	հատ	3446	0,01	40,21
64	Մեկուսիչ սպունգ Φ35, L=2մ	հատ	7	0,63	4,41
65	Մեկուսիչ սպունգ Φ42, L=2մ	հատ	8	0,87	6,97
66	Մեկուսիչ սպունգ Φ52, L=2մ	հատ	4	1,11	4,46
67	Մեկուսիչ սպունգ Φ65, L=2մ	հատ	7	2,23	15,59
68	Կապալար	կգ	1	0,47	0,23
69	Պոլիմեր.պարուր-ժապավեն մեծ 3/4	հատ	60	0,48	29,05
70	Խծուծ	կգ	0	4,26	1,70
71	Օդահան 1/2"	հատ	10	4,32	43,20
72	Հետադարձ զծի փական PPR (լր.պ)	հատ	182	3,35	610,04
73	Ձեռքի կարգավորման փական PPR	հատ	182	2,67	486,67
74	Փականներ Φ20մմ	հատ	12	3,48	41,80

75	Փականներ Φ15մմ	հատ	20	4,55	91,06
76	Փականներ Φ32մմ	հատ	30	4,27	128,06
77	Փականներ Φ40մմ	հատ	14	8,00	111,96
78	Փականներ Φ50մմ	հատ	8	6,48	51,81
79	Փականներ Φ63մմ	հատ	16	7,02	112,35
80	Անցում Φ25*20մմ	հատ	22,0	0,30	6,54
81	Անցում Φ32*25մմ	հատ	22,0	0,54	11,99
82	Անցում Φ20*15մմ	հատ	63,0	0,24	15,14
83	Անկյուն Φ15մմ	հատ	10,0	0,24	2,40
84	Եռակողմ 63x63x63	հատ	14	2,13	29,82
85	Եռակողմ 63x50x63	հատ	2	1,74	3,49
86	Եռակողմ 63x40x63	հատ	2	1,70	3,41
87	Եռակողմ 63x32x63	հատ	18	1,50	27,03
88	Եռակողմ 63x20x63	հատ	8	1,24	9,91
89	Եռակողմ 50x50x50	հատ	2	0,99	1,98
90	Եռակողմ 50x40x50	հատ	6	0,97	5,81
91	Եռակողմ 50x32x50	հատ	4	0,93	3,72
92	Եռակողմ 40x40x40	հատ	10	0,50	5,04
93	Եռակողմ 40x32x40	հատ	2	0,50	1,01
94	Եռակողմ 40x20x40	հատ	22	0,37	8,08
95	Եռակողմ 32x32x32	հատ	10	0,24	2,43
96	Եռակողմ 32x25x32	հատ	2	0,28	0,56
97	Եռակողմ 32x20x32	հատ	144	0,27	38,98
98	Եռակողմ 25x25x25	հատ	6	0,16	0,93
99	Եռակողմ 25x20x25	հատ	102	0,14	14,28
100	Եռակողմ 25x20x20	հատ	58	0,14	8,12
101	Անկյուն 63x63 90	հատ	30	1,38	41,54
102	Անկյուն 63x63 45	հատ	10	1,45	14,52
103	Անկյուն 50x50 90	հատ	40	0,81	32,53
104	Անկյուն 50x50 45	հատ	10	0,93	9,30
105	Անկյուն 40x40 90	հատ	90	0,43	38,32
106	Անկյուն 40x40 45	հատ	20	0,44	8,73
107	Անկյուն 32x32 90	հատ	400	0,21	85,40
108	Անկյուն 32x32 45	հատ	30	0,23	6,82
109	Անկյուն 25x25 90	հատ	460	0,10	44,54
110	Անկյուն 25x25 45	հատ	20	0,11	2,12
111	Անկյուն 20x20 90	հատ	500	0,06	29,17
112	Անկյուն 20x20 45	հատ	100	0,06	6,18
113	Շրջանցում Φ32	հատ	12	0,64	7,67
114	Շրջանցում Φ20	հատ	12	0,20	2,44
115	Խցան 63	հատ	8	0,77	6,12
116	Անցում 63x50	հատ	6	0,77	4,59
117	Անցում 63x40	հատ	4	0,68	2,73
118	Անցում 63x32	հատ	6	0,68	4,07
119	Անցում 63x25	հատ	2	0,68	1,36
120	Անցում 50x40	հատ	4	0,38	1,53
121	Անցում 50x32	հատ	12	0,39	4,65
122	Անցում 50x25	հատ	2	0,39	0,77
123	Անցում 40x32	հատ	22	0,23	5,00
124	Անցում 40x25	հատ	8	0,21	1,71
125	Անցում 32x25	հատ	52	0,09	4,79
126	Անցում 32x20	հատ	6	0,11	0,64
127	Անցում 25x20	հատ	10	0,06	0,63
128	Անցում 63x63	հատ	8	0,96	7,67
129	Անցում 50x50	հատ	20	0,58	11,62

130	Անցում 40x40	հատ	50	0,39	19,37
131	Անցում 32x32	հատ	130	0,15	18,96
132	Անցում 25x25	հատ	126	0,07	9,11
133	Անցում 20x20	հատ	100	0,05	5,02
	Ներքին ջրամատակարարման ցանց				
134	D=25մմ պողպատե խողովակների ապամոնտաժում	գմ	410,0	0,45	184,38
135	D=32մմ պողպատե խողովակների ապամոնտաժում	գմ	200,0	0,45	89,94
136	Մետաղապլաստե խողովակների տեղադրում պատերի վրա առանց մեկուսացման d=20մմ փորցարկումով	գմ	280,0	2,16	604,79
137	Փական d=15մմ	հատ	12	5,05	60,57
138	Զտիչ d=15մմ	հատ	6	3,02	18,11
139	Լվացարանի ծորակ	հատ	18	4,43	79,69
140	Ցնցուղի տեղադրում	հատ	4	9,07	36,30
141	Անցում ZL 20x1/2"F	հատ	26	0,58	15,11
142	Խցան 1/2"M	հատ	26	0,36	9,31
143	Եռակողմ 20x20x20	հատ	24	0,09	2,21
144	Անկյուն 20x20 90	հատ	200	0,06	11,67
145	Անկյուն 20x20 45	հատ	20	0,02	0,47
146	Շրջանցում Φ20	հատ	20	0,02	0,47
147	Անցում 20x20	հատ	50	0,06	2,92
148	Խողովակի ամրացում 20	հատ	100	0,02	2,33
149	Պտուտակ դյուպել N7	հատ	100	0,01	1,17
150	Անցում 1/2" MxM	հատ	20	0,38	7,56
151	Անցում 20X1/2" F (H)	հատ	12	1,11	13,37
152	Պոլիմեր.պարուր-ժապավեն մեծ 3/4	հատ	12	0,48	5,81
153	Խծուծ	կգ	0,15	4,20	0,63
	Ներքին կոյուղու ցանց				
154	Կոյուղու թուջե խողովակների ապամոնտաժում Φ100մմ տր.	գմ	30	0,84	25,3
155	Կոյուղու թուջե խողովակների ապամոնտաժում Φ50մմ տր.	գմ	3	0,83	2,5
156	Լվացարանի հանում	հ-տ	14	0,48	6,8
157	Ասիական զուգարանակոնքի հանում	հ-տ	13	0,6	7,8
158	հոսակների քանդում	հ-տ	8	0,54	4,3
159	Կոյուղու պլաստմասե խողովակների մոնտաժում Φ100	մ	63,6	1,72	109,7
160	Կոյուղու պլաստմասե խողովակների մոնտաժում Φ50	մ	45,6	1,14	52
161	Լվացարանների տեղ.	հ-տ	18	16,32	293,7
162	խոհանոցակոնքի տեղադրում, երկտեղ	հ-տ	1	55,37	55,4
163	Հոսակների տեղադ.Φ50	հ-տ	12	1,85	22,2
164	Նստակոնքի տեղադր. բաքով	հ-տ	18	27,57	496,2
165	Եռակողմ 4"x4"x4" 45	հատ	12	1,03	12,3
166	Եռակողմ 4"x2"x4" 45	հատ	24	1,14	27,4
167	Ծունկ 2" 45	հատ	70	0,15	10,2
168	Ծունկ 2" 90	հատ	70	0,15	10,2
169	Ծունկ 4" 45	հատ	40	0,51	20,4
170	Անցում 4"x2"	հատ	12	0,51	6,1
171	Ամրան 4"	հատ	12	0,44	5,2
172	Ամրան 2"	հատ	12	0,25	3,0
173	Կապալար	կգ	0,5	0,47	0,2
174	Խծուծ	կգ	0,15	4,20	0,6
	Էլեկտրական լուսավորություն				
175	Միաբևեռ անջատիչ, միաստեղ փակ հաղորդալարի համար	հատ	7	0,822	5,75
176	Նույնը՝ երկստեղ10A	հատ	8	1,685	13,48
177	Լուսակալ փոշի,ջուր չթափանցող, էներգախնայող լյումինեսցենտ լամպերով ,2x18 վտ հզորությամբ ,	հատ	51,0	9,14	465,98

	լամպերը կոմպլեկտի մեջ				
178	Մալուխ ալյումինե ՎՎԳ-3x2.5մմ2	գ,մ	100	1,547	154,73
	Արտաքին կոյուղու ցանց				
179	Խրամուղու փորում 3-րդ կարգի գրունտում ձեռքով	մ3	75	2,151	161,31
180	Գրունտի ետլիցք ձեռքով և տոփանում	մ3	60	0,899	53,97
181	Շին.աղբի տեղափոխում մինչև 10կմ հեռ. վրա	տն	9	2,243	20,19
182	Պլաստմասե խող. տեղադրում Մ100	մ	75	1,275	95,59
183	Ավազե նախապատրաստական շերտի իրականացում h=20 սմ	մ3	6	3,978	23,87
184	Ե/բ-ից կլոր դիտահորեր D=1000մմ 4հատ	մ3	4,8	88,20	423,38
185	Դիտահորի թուջե մտոց	հատ	4	54,73	218,92
	Ընդամենը առանց սարքավորումների				41 063.36
	Վերադիր ծախսեր 13.3%				5 461.43
	Ընդամենը				46 524.79
	Շահույթ 11%				5 117.73
	Ընդամենը				51 642.52
	Սարքավորումներ				5 993.02
	Ընդամենը				57 635.57
	Ժամանակավոր կառույցներ 1.2%				634,76
	Ձմեռային թանկացումներ 1.28%				685,20
	Ընդամենը				60 209.68
	Չնախատեսված ծախսեր և աշխատանքներ 1.5%				903,15
	Ընդամենը				61 112.83
	ԱԱՀ 20%				12 222.57
	Ընդամենը				**73 335.40**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ն. Հարությունյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

_____ Ա. Կարապետյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 2
<<10>> <<08>> 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/1» գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
<<ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Քանդման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ օրացուցային օրը ներառյալ
2	Ջեռուցման համակարգի աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ օրացուցային օրը ներառյալ
3	Շինարարական աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ օրացուցային օրը ներառյալ
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ օրացուցային օրը ներառյալ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ն. Հարությունյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

_____ Ա. Կարապետյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 3
<<10>> <<08>> 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/1» գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Ենթակա է վճարման 2016թ՝ ընդ որում						Ընդամենը
		9 ամիս			Տարի			
		հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1.	<<ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	*	18410700	36821400	54149136	54149136	54149136	54149136

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ն. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

_____ Ա. Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
<<10>> <<08>> 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/1» գնման պայմանագրի

«Ստեփանավանի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների ընթացքում շինարարական նյութերին և կոնստրուկցիաներին ներկայացվող պահանջներ

«Ստեփանավանի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների կատարման ընթացքում շնարարական նյութերը և կոնստրուկցիաները պետք է ունենան առնվազն 1 տարվա երաշխիքային ժամկետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ն. Հարությունյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

_____ Ա. Կարապետյան
(ստորագրություն)

Կ.Տ

«ՊՐՈՖՊՐՈԵԿՏ»
«ПРОФПРОЕКТ»
«PROFPROJECT»
02244386
«Հ»